ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (0255) 6-03-23
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ավագանու 20.02.2017 թ. թիվ 8-Ն որոշումը:
Առդիր 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (0255) 6-03-23
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 20 » փետրվարի 2017 թվականի թիվ 8 -Ն

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով,«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ջրաշեն համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի :
2. Հաստատել 2016 թվականի Ջրաշեն համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համայնքի ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.Հուսիկ Թովմասյան			
2.Զավեն Տոնիկյան			
3.Կարապետ Ուռուսյան			
4.Հրաչյա Հովհաննիսյան			
5.Մացակ Ուռուսյան			
6.Ժորա Մկրտչյան			
7.Սպարտակ Թումասյան			
8.Բենիկ Զարգարյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ավագանու
2017 թվականի փետրվարի 20-ի 8-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ջրաշեն համայնքի բյուջեն փաստացի կազմել է 173876.5 որից 74061.4հազար դրամ 2016թվականի եկամուտներ և 99815.1 հազար դրամ բյուջեի հավելուրդը:

2016 թվականի բյուջեի եկամուտների կատարման մասին ըստ առաձին եկամտատեսակների

Եկամտային հատված				
N	Անվանումը	պլան	փաստացի	տոկոս
1	Գույքահարկ ձեռնարկությունների և կազմակերպությունների	24.7	25.22	102.1
2	Գյուղատնտեսական նշանակության հողի հարկ	5067.3	5072.8	100.1
3	Գույքահարկ փոխադրամիջոցների	3280.3	3282.1	100.1
4	Հողի վարձակալության դեմ վճարումներ	200.0	201.15	100.6
5	Տեղական տուրքեր	322.5	322.9	100.1
6	Տեղական վճարներ	20.0	19.9	99.5
7	Դոտացիա	65146.6	65146.6	100.0
8	Ընդամենը	74061.4	74070.7	100

Բյուջեի եկամտային մասը կատարվել է 100% - ով որտեղ սեփական եկամուտներ կազմել է 8694.8, կատարվել է 8703.0 կամ 100%:

Համայնքի 2016 թվականի բյուջեի ծախսային մասը կազմել է 173876.5 հազար դրամ որից վարչական բյուջե - 74061.4, ֆոդային բյուջե 102000.0, փաստացի կատարվել է 133247.9 հազար դրամ, որից վարչական բյուջե-56200.4, ֆոնդային բյուջե 77047.5 կամ 76.6%:

Համայմնքի բյուջեի ծախսերը ըստ բաժինների:

Ծախսային հատված				
N	Անվանումը	Պլան	Փաստացի	տոկոս
1	Ընդհանուր բնույթի հարային ծառայություններ	50514.5	41203.4	81.6
2	Տնտեսական հարաբերություններ	69520.0	68185.5	98.1
3	Շրջակա միջավայրի պաշտպանություն	600.0	0	0
4	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	200.0	0	0

5	Հանգիստ, մշակույթ, կրոն	1000.0	260.0	26.0
6	Կրթություն	43900.0	17824.0	40.6
7	Սոցիալական պաշտպանություն	7200.0	5775.0	80.2
8	Պահուստային ֆոնդ	942.0	0	0
9	Ընդհանուր ծախսեր	173876.5	133247.9	76.6

Կատարված ծախսերը ըստ բաժինների՝

1.Ընդհանուր բնույթի ընթացիկ ծախսեր օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման ապարատի պահպանման ծախսեր կազմել է 41203.4 հազար դրամ, նախատեսված 50514.5 հազար դրամի փոխարեն:Վճարվել է աշխատավարձ 27619.9 հազար դրամ նախատեսված 30620.0 հազար դրամի փոխարեն, որից պետբյուջե է փոխանցվել 8105.8 հազար դրամ եկամտային հարկ և 197.7 հազար դրամ կուտակային կեսաթոշակային ֆոնդին:Անհրաժեշտ ծառայությունների և ապրանքների ձեռք բերման նպատակով ծախսվել է 11438.5 հազար դրան նախատեսված18632.5 հազար դրամի փոխարեն:

2.Տնտեսական հարաբերությունների նպատակով ծախսվել է 68185.5 հազար դրամ, որից 2340.0 հազար դրամ նախագծահետազոտական ծախսեր, 59395.48 հազար դրամ փողոցների ասֆալտապատման աշխատանքներ (կառուցվել է 1270մ ճանապարհ):

3.Հանգստի, մշակույթի, կրոնի բաժնով նախատեսված 260.0 հազար դրամը ուղղվել է «բերքի տոն-2016», «Հայաստանի Համահայկական Հիմնադրամ» և այլ միջոցառումների համար:

4. Կրթական ոլորտում նախատեսված 43900.0 հազար դրամից ծախսվել է 17824.0 հազար դրամ որից համայնքում նոր մանկապարտեզի կառուցման համար 14661.97 հազար դրամ(աշխատանքները ժամանակավոր դադարեցվել են շինարարության համար անբարենպաստ եղանակի պատճառով)1573.04 հազար դրամ ծախսվել է համայնքում գործող նախակրթարանի աշխատողներին աշխատավարձի վճարումների համար, 1325.0 հազար դրամ դպրոցական դասագրքեր ձեռք բերման նպատակով հատկացվել է դպրոցին որպես դրամաշնորհ և 264.0 հազար դրամ ծախսվել է ուսանողներին ուսման վարձերը վճարելու նպատակով:

5.Սոցիալական պաշտպանվածության նպատակով ծախսվել է 5775.0 հազար դրամ նախատեսված 7200.0 հազար դրամի փոխարեն.

-1080.0 հազար դրամ հատկացվել 18 ընտանիքներին որպես հուղարկավորման ծախս

- 1260.0 հազար դրամ հատկացվել է 63 մայրերի ծննդաբերությունը խրախուսելու նպատակով

-3435.0 հազար դրամ հատկացվել է սոցիալապես անապահով 182 ընտանիքների

-550.0 հազար դրամ հատկացվել է 55 զինծառայողների ընտանիքներին

-90.0 հազար դրամ հատկացվել է հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ

Հավելված 2
Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ավագանու
2017 թվականի փետրվարի 20-ի N 8-Ն որոշման

1.Շինարարություն

2016 թվականը բեկումնային էր շինարարության բնագավառում:Ջրաշեն համայնքի բյուջեի հաշվին ասֆալտապատվեց 1270 մ գյուղամիջյան ճանապարհ՝ 8-րդ փողոցի մի հատվածը և 9-րդ փողոցը ամբողջությամբ:Փողոցների ընտրությունը պատահական չէր, քանի որ նշված հատվածները գլխավոր փողոցներ էին և հարակից էին միջնակարգ դպրոցի մասնաշենքին և բուժամբուլատորիային:Ճանապարհների ասֆալտապատումը արժեցավ 61735.5 հազար դրամ, որից նախագծային աշխատանքների համար 2340.0 հազար դրամ:

2016 թվականի ընթացքում սկսվել է Ջրաշենի մանկապարտեզի մասնաշենքի շինարարաությունը՝ 37500.0 հազար դրամ արժողությամբ, որից նախագծային աշխատանքների համար 990.0 հազար դրամ, որը եղանակային պայմաններից ելնելով ավարտին կհասցվի 2017 թվականի 2-րդ եռամսյակում:

Տարբեր դոնոր կազմակերպությունների հետ մշակվում են ծրագրեր համայնքի փողոցները ամբողջությամբ լուսավորելու և ճանապարհները բարեկարգելու նպատակով:

2.Գյուղատնտեսություն

2016 թվականը բարենպաստ էր նաև գյուղատնտեսական աշխատանքների համար:2016 թվականի ընթացքում համայնքում ստացվել է 23120գ համախառն հացահատիկի բերք,1 հա միջին բերքատվությունը կազմել է շուրջ 34գ:

Կատարվել է 320 հա աշնանացան:

Համայնքում մշակվել է 90 հա կարտոֆիլ և 100 հա կաղամբ, որից ստացվել է 25650գ կարտոֆիլ, 33150գ կաղամբի բերք:1 հա միջին բերքատվությունը կազմել է կարտոֆիլը 285գ,կաղամբը 353գ:

Կուտակվել է 1860 տոննա խոտ , 960 տոննա ծղոտ:

Պետական սուբսիդավորմամբ ազգաբնակչությանը տրամադրվել է գարու, առվույտի, կորնգանի սերմացուներ և ազոտական պարարտանյութ՝ պարկը 6000 դրամով:

Նախորդ տարիների համեմատ աճ է նկատվում նաև անասնապահության բնագավառում:Համայնքը հարուստ չէ արոտավայրերով, սակայն 2017 թվականին համայնքում առկա է 1149 գլուխ խոշոր եղջերավոր անասուն

345 գլուխ մանր եղջերավոր անասուն

675 մեղվաընտանիք

5121 թև թռչուններ:

3.Մշակույթ և սպորտ

2016 թվականի ընթացքում, ինչպես և նախորդ տարիներին չնայած այն հանգամանքին, որ համայնքում չկա կուլտուրայի տուն միջնակարգ դպրոցի դահլիճում և այլ վայրերում նշվել է բանակի, մայրության և գեղեցկության, հայրենական մեծ պատերազմի և Շուշիի ազատագրման տոները:

Համայնքը անմասն չի մնացել մարզում և հանրապետությունում կատարվող միջոցառումներից և իր համեստ ներդրումն է ունեցել Համահայկական Հիմնադրամի մարաթոնին և ակտիվորեն մասնակցել է ամենամյա մարզային միջոցառմանը:

4.Սոցիալական ոլորտ

Ինչպես նախորդ տարիներին այնպես էլ 2016 թվականին ուշադրության կենտրոնում են եղել համայնքի սոցիալապես անապահով խավը:

2016 թվականի ընթացքում համայնքի բյուջեից շուրջ 183 ընտանիքների ցուցաբերվել է 3435.0 հազար դրամի օգնություն:

Ծննդաբերությունը համայնքում խրախուսելու նպատակով համայնքի 63 ընտանիքների տրվել է յուրաքանչյուրին 20.000-ական դրամ միանվագ գումար:

Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, Արցախյան ազատամարտի մասնակիցներին և զոհված ազատամարտիկների ընտանիքներին ցուցաբերվել է 90.000 դրամական օգնություն, ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից 3 կամավորների տրվել է 50.000 դրամական օգնություն, բանակում ծառայող 53 զինվորների ընտանիքներին տրվել է 10.000 դրամական օգնություն:

1080000 դրամ տրամադրվել է համայնքի հարազատ կորցրած 18 ընտանիքներին հուղարկավորման ծախսերը փոքր ինչ թեթևացնելու համար

264.000 դրամ տրամադրվել է 4 ուսանողների, որպես ուսման վարձ:

200.000 դրամ փոխանցվել է Արցախում բացված հատուկ հաշվեհամարին և 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմից հետո համայնքի ուժերով կազմակերպվեց այց Արցախի N զորամաս:

Բարձր մակարդակի վրա է գտնվում համայնքապետարան-դպրոց հարաբերությունները և դա օրինաչափ է , քանի որ համայնքային խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է համատեղ համագործակցությունը:

Արդեն ավանդույթ է դարձել ավարտական դասարանների էքսկուրսիաների կազմակերպումը դեպի Հայաստանի տեսարժան վայրեր, դպրոցում կազմակերպված միջոցառումների և հիշատակի կամ մեծարման երեկոների ֆինանսական ծախսերը հոգում է համայնքապետարանը՝ տեղական բյուջեի հաշվին:

1325.0 հազար դրամ դպրոցական դասագրքերի ձեռքբերման նպատակով հատկացվել է դպրոցին որպես դրամաշնորհ:

5.Վերջաբան

2017 թվականի ընթացքում համայնքապետարանի գործունեությունը նույնպես պետք է ուղղված լինի համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը

Համայնքի հիմնահարցը եղել է և մնում է բնակարանաշինությունը

Համայնքի շուրջ 130 ընտանիքներ դեռևս բնակվում են վագոն-տնակներում և վթարային բնակարաններում, այս թվի մեջ մտնում են աղետի հետևանքով բնակտարածություն չկորցրած ընտանիքները:

Խնդրի լուծումը մենք տեսնում ենք մարզպետարանի հետ սերտ համագործակցությամբ և ՀՀ Կառավարության անմիջական ուշադրությունը ներգրավելով

2017թ. նախատեսվում է լուրջ ուշադրություն դարձնել ներհամայնքային ճանապարհների վերականգմանը և բարեկարգմանը, որը նույնպես նախատեսվում է իրագործել դոնոր կազմակերպությունների և ՀՀ կառավարության հետ համագործակցելով

Ոչ պակաս կարևոր խնդիր է համայնքային կենտրոնի կառուցումը, քանի որ ազգաբնակչությունը չունի կուլտուր-կենցաղային միջոցառումների անցկացման վայր իսկ համայնքի ղեկավարի աշխատակազմը աշխատանքային գործունեությունը իրականացնում է տնակային պայմաններում

Աշխատանքներ են տարվում համայնքում փոքր ձեռնարկություններ հիմնելու ուղղությամբ, որով կլուծվի որոշ ընտանիքների աշխատատեղերի և գյուղմթերքի իրականացման հարցը

Մեր խնդիրներից է նաև ցանովի մշակաբույսերի կարտոֆիլի, գարու, ցորենի որակյալ սերմերով համայնքը ապահովելու հարցը, քանի որ համայնքի հողերը կորցրել են իրենց արդյունավետությունը և այս խնդիրը նույնպես լինելու է մեր ուշադրության կենտրոնում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ